ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 18
28.11.2012թ.

ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է - Հաստատել Ոստան համայնքի ավագանու կանոնակարգը:

ԱՐՇԱԿՅԱՆ ԳԵՂԱՄ
ԱԼՈՅԱՆ ՇՈՂԻԿ
ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԻՆԵ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԾՈՎԻԿ

ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 19
28.11.2012թ.

ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական տուրքերի և վճարների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 10 և 11 հոդվածներով և "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով ավագանին

ՈՐՈՇԵՑ

Ոստան համայնքի վարչական տարածքում 2013թ. համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների՝ ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական օբյեկտների համար՝

ա/ մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 10000 դրամ,

բ/ սույն կետի "ա" ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա/ 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10000 դրամ,

բբ/ 501-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ,

բգ/ 1001 և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 17500 դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ/ մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 750 դրամ,

դ/ 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1250 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման,

արդիականացման աշխատանքների /բացառությամբ ՀՀ օրենքով սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված է ճարտարապետաշինարարական նախագծով,

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 750 դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման համար տեղական տուրքը սահմանվում է 1250 /մեկ հազար երկու հարյուր հիսուն/ դրամ:

ա/ ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3750 /երեք հազար յոթ հարյուր հիսուն/ դրամ,

բ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3750 /երեք հազար յոթ հարյուր հիսուն/ դրամ:

5. Համայնքի տարածքում բացօթյա վաճառքի կազմակերպման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 350 /երեք հարյուր հիսուն/ դրամ:

6. Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկներ, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար ընթացիկ տարվա համար՝ 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ:

7. Համայնքի տարածքում խաղատները, հանրային սննդի օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, զվարճանքի օբյեկտները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա/ առևտրի օբյեկտների համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ,

բ/ վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ,

գ/ խաղատների համար՝ 500000 /հինգ հարյուր հազար/ դրամ,

դ/ շահումներով խաղերի կազմակերպման համար՝ 250000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ,

ե/ բաղնիքների /սաունաների/ համար՝ 200000 /երկու հարյուր հազար/ դրամ,

զ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 /հիսուն հազար/ դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանված է 300 /երեք հարյուր/ դրամ:

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու համար կապված տեխնիկա-տնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմիններին մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 /մեկ հազար/ դրամ:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 500 /հինգ հարյուր/ դրամ:
3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցների վճար՝ 500 /հինգ հարյուր/ դրամ:

Կողմ՝ ԱՐՇԱԿՅԱՆ ԳԵՂԱՄ
ԱԼՈՅԱՆ ՇՈՂԻԿ
ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԻՆԵ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՇՈՎԻԿ

Դեմ՝ չկա:
Ձեռնպահ՝ չկա:

ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 20
28.11.2012թ.

ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է - Հաստատել Ոստան համայնքի քառամյա զարգացման ծրագիրը:

ԱՐՇԱԿՅԱՆ ԳԵՂԱՄ
ԱԼՈՅԱՆ ՇՈՂԻԿ
ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԻՆԵ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԾՈՎԻԿ

ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ